


Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ես՝ Արտակ Վրույրի Հայրապետյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարգապահական և ներքին հսկողության բաժնում որպես փորձագետ 1 տարի աշխատելու ժամանակահատվածում (17.03.2022-17.03.2023թթ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. վարել եմ Ծառայության վարչական տարածքի անցագրային թույլտվությունների (ձև 1, ձև 2, ձև 3, ձև 4 և ձև 5) կենտրոնացված մուտքագրումը ՀՀ ՊՎԾ ԿՆՀ բաժնի տեղեկատվական բազա, որի հիման վրա ներկայացրել եմ ամսական վերլուծություն"
2. իրականացրել եմ ստուգումներ Ծառայության համապատասխան արտաքին ստուգող խմբի բարեվարքության և Ծառայությունից բխող այլ կարգապահական կանոնների պահպանման վերաբերյալ պետական համապատասխան կառույցների հետ համագործակցելով՝ ապահովել եմ զանգվածային լրատվամիջոցներում ՀՀ ՊՎԾ աշխատակիցների, ինչպես նաև Ծառայությանը վերաբերող այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվության մշտադիտարկում"
3. ձեռնարկել եմ միջոցներ սոցիալական ցանցերում և զանգվածային լրատվամիջոցներում Ծառայության աշխատակիցների վերաբերյալ հնարավոր ապատեղեկատվության տարածումը կանխարգելելու ուղղությամբ"
4. հավաքագրել եմ տեղեկատվություններ, որոնք վերաբերել են Ծառայության աշխատակիցների բարեվարքությանը, կարգապահությանը և ներքին կանոնների պահպանմանը"
5. բաց աղբյուրների միջոցով ուսումնասիրել, համադրել և համապատասխան արձանագրություններ եմ կազմել աշխատակիցների հնարավոր շահերի բախման հավանականության մասին, դրանց վերաբերյալ առարկայական առաջարկներ ներկայացրել"
6. համագործակցել եմ հսկիչ-անցագրային կետի ծառայողների հետ՝ Ծառայության աշխատակիցների աշխատանքային անցուդարձը կանոնակարգելու և ի հայտ եկած խնդիրները լուծելու նպատակով"
7. ՀՀ ՊՎԾ ԿՆՀ բաժնի տեղեկատվական բազան հարստացրել եմ կատարված ընթացիկ աշխատանքների վերաբերյալ նոր ֆայլադարաններ ստեղծելով և դրանք շարունակական ու հետևողական կերպով վարելով"
8. կատարել եմ Ծառայությանը վերաբերող ընթացիկ տարաբնույթ հանձնարարականներ:

**ՀՀ պետական վերահսկողական ծառայության
կարգապահական և ներքին հսկողության
բաժնի փորձագետ՝**



Ա.Հայրապետյան

«17» մարտի 2023թ.